ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Գաղտնիության քաղաքականությունը մշակված է «Դոպինգ Սփեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 02893152, գտնվելու վայրը՝ ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն 58), այսուհետ՝ «Ընկերություն», և կարգավորում է սույն կայքում (այսուհետ՝ Կայք) Ընկերության կողմից անձանց անձնական տվյալների օգտագործման հետ կապված հարաբերությունները: Գաղտնիության քաղաքականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

2. Գաղտնիության քաղաքականությունը սահմանում է, թե ինչպես է Ընկերությունն օգտագործում իր կողմից հավաքագրված անձնական տեղեկությունները Կայքն օգտագործելիս:

3. Կայքում օգտագործվող բոլոր տերմիններն ունեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ «Օրենք») սահմանված իմաստը:

   Համաձայն Օրենքի <u>անձնական տվյալ է համարվում որևէ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը</u>:

   «Տվյալ», «տեղեկություն» տերմինները Կայքում օգտագործվում են հավասարազոր նշանակությամբ:

   Գաղտնիության քաղաքականության պայմանների ընդունման վանդակում նշում անելը նշանակում է համաձայնություն տալ սույն քաղաքականությամբ նախատեսված նպատակներով Ձեր անձնական տվյալների մշակմանը:

4. Ինչպե՞ս է Ընկերությունը հավաքագրում տեղեկություններ.

   Ընկերությունը տեղեկություններ հավաքագրում է հետևյալ միջոցներով.

   - Երբ Դուք օգտվում եք Ընկերության Կայքում առաջարկվող որևէ ծառայությունից՝ մուտքագրելով Ձեր անձնական տվյալները,
   - գրանցվում եք առցանց կամ գնում եք տոմս,
   - Բաժանորդագրվում եք նորություններին,
   - Լրացնում եք «Հետադարձ կապ» ձևը,
   - Կամավոր լրացնում եք հանձնարարների հարցումը, հաղորդագրություն եք թողնում Կայքում կամ ուղարկում եք էլեկտրոնային նամակ,
   - Այցելում եք, օգտագործում կամ ուսումնասիրում եք Կայքը՝ Ձեր բրաուզերի քուքիների (cookies) միջոցով (այս դեպքում տեղեկատվությունը պահպանվում է «Cookies» բաժնում):

   Վերը թվարկված միջոցներով ստացված Ձեր վերաբերյալ տեղեկությունները համարվում են անձնական տվյալներ:

5. Ինչպիսի՞ անձնական տվյալներ է հավաքագրում Ընկերությունը.

   Ընկերությունը հավաքագրում է որևէ ծառայություն մատուցելու համար սույն գաղտնիության քաղաքականությամբ սահմանված Ձեր տվյալների մշակման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ, IP հասցեներից ստացվող և «Cookies» բաժնում պահպանվող տեղեկությունները (անձնական տվյալները), մասնավորապես.

- անուն, ազգանուն,
- էլեկտրոնային հասցե,
- հեռախոսահամար:

Ձեր անձնական տվյալները հասանելի են դառնում Կայքում գրանցվելու պահից: IP հասցեներից տվյալների ստացումը և «Cookies» բաժնում դրանց պահպանումը սկսվում է ավտոմատ կերպով այն պահին, երբ Դուք այցելում եք Ընկերության Կայք:

6. Ինչպե՞ս է Ընկերությունն օգտագործում Ձեր տվյալները.

Ընկերությունը կարող է օգտագործել գրանցման, նորությունների բաժանորդագրման, «Հետադարձ կապ» ձևի կամ Կայքից որևէ այլ կերպ օգտվելու միջոցով Ձեզանից հավաքագրված տվյալները հետևյալ նպատակներով.

- Ընկերության գործունեության շրջանակներում Ձեզ ծառայություններ մատուցելու համար,
- Ընկերության Կայքում առաջարկվող ծառայություններ մատուցելու համար,
- Ձեր պատվերը մշակելու համար,
- Ձեր կողմից ստացված կատարվող վճարումները հաստատելու համար,
- Ընկերության նոր առաջարկները, զեղչի հնարավորությունները և Ընկերության ծառայությունների վերաբերյալ այլ տեղեկություններ ուղարկելու համար,
- հատուկ առաջարկներ այլ ապրանքների և ծառայությունների մասին էլեկտրոնային հասցեին ուղարկելու համար, որոնք Ընկերության կարծիքով կարող են հետաքրքրել Ձեզ,
- Սպասարկման որակի բարձրացման նպատակով Կայքի բարելավման համար,
- Հաճախորդների պահանջներին համապատասխանող սպասարկման որակի ապահովման համար,
- Ձեզ հետ կապ հաստատելու խնդրանքին արձագանքելու համար:

Ձեր կողմից տրամադրված տեղեկությունները պահպանվում են տվյալների շտեմարանում, որը թարմացվում է յուրաքանչյուր անգամ՝ նոր տեղեկություն ստանալիս: Երբ Դուք դադարեցնում եք բաժանորդագրությունը, Ձեր տվյալները պահպանվում են դադարեցված բաժանորդների ցանկում:

7. Ինչպե՞ս է Ընկերությունը պահպանում և պաշտպանում Ձեր տվյալները.

Ընկերությունը Ձեր տվյալները պահում է https://sendpulse.com/ անվտանգ սերվերում: Տվյալների փոխանցումն իրականացվում է secure socket layer (SSL) տեխնոլոգիայով:

Ընկերությունը կձեռնարկի տվյալների անվտանգության ապահովման համար անհրաժեշտ և համարժեք տեխնիկական և կազմակերպչական բոլոր միջոցառումները Ձեր տվյալների անձեռնմխելիությունն ապահովելու ուղղությամբ: Ընկերությունը կիրառում է համապատասխան տեխնիկական և ինստիտուցիոնալ միջոցներ Ձեր անձնական տվյալները անօրինական միջամտությունից պաշտպանելու համար: Չնայած դրան, Դուք պետք է գիտակցեք, որ նման միջամտության հնարավորությունն ամբողջապես բացառել հնարավոր չէ: Այնուամենայնիվ, Ընկերությունը պարտավորվում է կատարել Օրենքով սահմանված իր պարտավորությունները:

Ձեր անձնական տվյալները գտնվում են պաշտպանված ցանցերում և հասանելի են միայն սահմանափակ թվով մարդկանց (Ընկերության աշխատողներին), ովքեր նշված համակարգերի հասանելիության հատուկ իրավունքներ ունեն և պարտավոր են պահպանել նշված տեղեկությունների գաղտնիությունը:

Ցանկացած օգտագործողի կողմից անձնական տեղեկությունների տրամադրման ժամանակ Ընկերությունը կիրառում է անվտանգության մի շարք միջոցներ:

8. Որո՞նք են տվյալների պաշտպանության Ձեր իրավունքները.

Յուրաքանչյուր օգտատեր իրավունք ունի.

- ծանոթանալ անձնական տվյալներին և ստանալ դրանց վերաբերյալ տեղեկություններ,
- պահանջել անձնական տվյալների ուղղում,
- պահանջել անձնական տվյալների ոչնչացում,
- պահանջել ուղեփակում:

Վերը թվարկված իրավունքներից յուրաքանչյուրից օգտվելու ցանկության դեպքում կարող եք գրել Ընկերությանը՝ հաղորդագրություն ուղարկելով support@dopingspace.com էլեկտրոնային հասցեին:

9. Ընկերությունը պարտավորվում է.

- Չօգտագործել կեղծ կամ ապակողմնորոշիչ վերնագրեր կամ էլեկտրոնային հասցեներ,
- Եթե հաղորդագրությունը հանդիսանում է գովազդ, ողջամիտ կերպով որակել այն որպես այդպիսին,
- Անմիջապես արձագանքել բաժանորդագրության դադարեցման դիմումներին,
- Հնարավորություն տալ Օգտատերերին դադարեցնել բաժանորդագրությունը՝ սեղմելով յուրաքանչյուր էլեկտրոնային նամակի վերջում նշված հղումը:

10. Արդյո՞ք Ընկերությունն օգտագործում է **«cookies»** բաժինը.

Այո: «Cookie»-ները փոքր ֆայլեր են, որոնք որևէ Կայք կամ ծառայություն մատուցող ուղարկում է Ձեր համակարգչի կոշտ սկավառակին վեբ-բրաուզերի միջոցով (Ձեր թույլտվության դեպքում), և որոնք թույլ են տալիս տվյալ Կայքի կամ ծառայություն մատուցողի համակարգերին ճանաչել Ձեր բրաուզերը և որսալ ու հիշել որոշակի տեղեկատվություն: Դրանք օգնում են հասկանալ Ձեր նախընտրությունները՝ հիմնվելով Կայքում իրականացված Ձեր նախկին կամ ընթացիկ գործողությունների վրա, ինչն իր հերթին հնարավորություն է տալիս բարելավել Ձեզ մատուցվող ծառայությունների որակը:

11. Ընկերությունն օգտագործում է **«Cookie»-**ները.

- Հետագա այցելությունների նպատակով Օգտատերերի նախընտրությունները հասկանալու և հիշելու համար,
- Գովազդին հետևելու համար,
- Կայքի գործածության և այցելությունների քանակի վերաբերյալ տվյալների ամբողջացման նպատակով՝ հետագայում Կայքի որակի բարելավման և նոր գործիքների մշակման համար: Ընկերությունը կարող է նաև օգտվել վստահելի երրորդ անձանց ծառայություններից, որոնք կհետևեն նշված տեղեկություններին Ընկերության անունից:

12. Ինչպե՞ս է Ընկերությունն օգտագործում քուքիները.

Ընկերությունն օգտագործում է քուքիները տարբեր եղանակներով, ներառյալ՝ Ձեզ Կայքում «մուտք գործած» պահելով:

13. Ի՞նչ տեսակի քուքիներ է Ընկերությունն օգտագործում.

Գոյություն ունեն քուքիների տարբեր տեսակներ: Կայքում օգտագործվում է հետևյալ տեսակը.

Ֆունկցիոնալություն. Ընկերությունն օգտագործում է այս քուքիները Կայքում Ձեզ ճանաչելու և Ձեր կողմից նախկինում ընտրված նախապատվությունները հիշելու համար: Դրանք կարող են հիշել,

մասնավորապես, թե որ լեզուն եք նախընտրում և որտեղ եք գտնվում: Օգտագործվում են ինչպես սեփական, այնպես էլ կողմնակի ֆուֆիներ:

14. Ինչպե՞ս կառավարել ֆուֆիները.

Դուք կարող եք կարգավորել Ձեր բրաուզերն այնպես, որ այն չընդունի ֆուֆի ֆայլեր:

Դուք կարող եք ընտրել այնպիսի կարգաբերում, որ յուրաքանչյուր անգամ Կայքի կողմից «Cookie» ուղարկվելիս Ձեր համակարգիչը տեղեկացնի Ձեզ այդ մասին կամ պարզապես անջատել բոլոր «Cookie»-ները: Դա կատարվում է բրաուզերի կարգաբերումների միջոցով: Քանի որ բրաուզերները մի փոքր տարբերվում են իրարից, փորձեք կատարել «Cookie»-ների հետ կապված անհրաժեշտ փոփոխությունները բրաուզերի «Օգնության մենյու» բաժնի միջոցով:

Ընկերությունն ընդունում է «Ձհետևել» ազդանշանները և չի հետևում Ձեր բրաուզերին, չի ուղարկում «Cookie»-ներ կամ կիրառում դրանք գովազդային նպատակներով, եթե բրաուզերի «Ձհետևել» մեխանիզմն ակտիվացված է:

«Cookie»-ներն անջատելու դեպքում Կայքի որոշ ֆունկցիաներ կարող են կասեցվել:

15. Տեղեկությունների տրամադրումը երրորդ անձանց.

Ընկերությունը, առանց նախապես ստանալու Ձեր համաձայնությունը, չի վաճառում կամ այլ կերպ փոխանցում Ձեր անձնական տվյալները երրորդ անձանց, այդ թվում՝ Ընկերության գործընկեր հանդիսացող ընկերություններին, կազմակերպություններին, որոնք հանդես չեն գալիս որպես Ընկերության լիազորված անձիք: Վեբ-կայքի հոսթինգը տրամադրող Ընկերության գործընկերները և այլ անձիք, ովքեր աջակցում են Ընկերությանը Կայքի շահագործման, գործունեության իրականացման, օգտագործողների սպասարկման հարցում, հանդիսանում են Ընկերության լիազորված անձ, ովքեր մշակում են անձնական տվյալները միայն առաջադրանքի շրջանակներում: Ընկերությունը կարող է նաև հրապարակել տեղեկությունները օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Կայքի քաղաքականությունների կիրառման, Ընկերության կամ այլ անձանց իրավունքների, գույքի կամ անվտանգության պահպանման նկատառումներից ելնելով:

Ընկերությունը թույլ չի տալիս որևէ երրորդ կողմի իրականացնել Կայքի տիրույթում օգտագործողների պահվածքի ուսումնասիրություն:

16. Երրորդ կողմի հղումներ.

Ընկերության Կայքում կարող են ներառվել կամ առաջարկվել երրորդ անձանց ապրանքներ կամ ծառայություններ:

Ընկերության Գաղտնիության քաղաքականությունը տարածվում է միայն Ընկերության Կայքում: Այսպես. եթե անցնում եք մեկ այլ կայքի հղումով, ապա պետք է ծանոթանալ այդ կայքի գաղտնիության քաղաքականությանը:

<u>Ձեր համաձայնության դեպքում</u> Ընկերությունը Ձեր տվյալները կտրամադրի նաև իր գործընկերներին, որպեսզի նրանք նույնպես հնարավորություն ունենան առաջարկել Ձեզ իրենց ապրանքներն ու ծառայությունները: Համաձայն եմ — վանդակ:

17. Փոփոխություններ կատարելը.

Ընկերությունը պարբերաբար վերանայում և լրամշակում է Գաղտնիության քաղաքականությունը և բոլոր թարմացումները տեղադրում է Կայքում: Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած պահի և ցանկացած պատճառով առանց նախապես տեղեկացնելու միակողմանիորեն փոփոխել իր Գաղտնիության քաղաքականությունը: Նոր փոփոխությունները կիրառելի են Ձեր նկատմամբ, եթե Դուք

տվել եք Ձեր համաձայնությունը նոր պայմաններով (փոփոխություններով) տվյալների մշակման վերաբերյալ:

18. Անձնական տվյալների պահպանության ժամկետը.

Ձեր անձնական տվյալները պահպանվում են մինչև Ընկերության ծառայություններից վերջին անգամ օգտվելուց երեք տարի հետո կամ մինչև Ձեր կողմից Ընկերությանը Ձեր անձնական տվյալները ոչնչացնելու դիմում ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետի լրանալը:

19. Կայքի օգտագործման կարգը սահմանված է Կայքի օգտագործման կանոններով, որը տեղադրված է https://dopingspace.com/rules-of-website-use-arm.pdf հետևյալ հղմամբ:

20. Հետադարձ կապ.

Եթե ունեք հարցեր Գաղտնիության քաղաքականության, Ձեր մասին պահվող տվյալների վերաբերյալ կամ ցանկանում եք օգտվել Ձեր տվյալների պաշտպանության իրավունքից, կարող եք գրել Ընկերությանը՝ հաղորդագրություն ուղարկելով support@dopingspace.com էլեկտրոնային հասցեին:

21. Գաղտնիության քաղաքականությանը համաձայնություն տալու տողի վանդակում նշում անելով՝ Դուք հաստատում եք, որ ընթերցել եք, հասկացել եք և տալիս եք Ձեր համաձայնությունը վերոշարադրյալ Գաղտնիության քաղաքականությանը, Ձեր անձնական տվյալները Գաղտնիության քաղաքականությամբ սահմանված նպատակներով մշակելու վերաբերյալ: